բանս ասէին, նա լայր դողալով, քանզի բազում վիշտ կրելով ահ կրէր յորմէ հետէ նստեալ էր յաթոռ եւ ոչ կարէր մի ինչ առնել. և զարտասուսն սրբելով հայէր ի վայր եւ խօսեցաւ թէ Այժմ զի՞նչ խնդրէք։ Եւ սոքա ցոյց տվեալ զտէֆտէրն, ի ներսէն եւ ի դրսէն Լ.Ա. ոգի գրելով մեծամեծ ի մէջ մանսուպի եւ ի մէջ սալթանաթի, որ մի մի թագաւոր էին եւ ի բազում ժամանակաց ուտէին զմանսուպքն, եւ զթագաւորութեան դրամն ամենայն եւ զանձն ի սոցա տուին զտաներ վասն մանկութեան թագաւորին. ինքեանք միմեանց օգնական լինելով, նոքա ի ներսէն եւ սոքա ի դրսէն, որպէս կամէին զայն առնէին։ Որք էին այսոքիկ. Վալիտէ, որ ասի մայր թագաւորին, եւ քէխիայ նորին, եւ Մուլքի խաթունն, մուսահիպ Իւսուֆ աղան եւ զզվար աղասին, վալիտէ աղասին եւ զսարայ աղասին, զՊիլալ աղան և զխասոտապաշին, զզափու աղասին եւ զԻպրօ՝ դպիր զվար աղասուն։ Եւ ի դուրս՝ զՍալէհ աղան և զՀասան աղան, զՄուստաֆա աղան և զԱալիճէլի օղլին, զքէհեաղէկն եւ զյէնկիչէր աղասին, Շապան զալֆան եւ զՂարա Աբտուլան, զՄէմար Մուստաֆան, զՏէլի Պրաղէն եւ զփեսայ նորին՝ զչաուշպաշին եւ զԱնդօն կեաւուրն։ Զայսոսիկ ի գիր արկեալ, որում ասացին թէ Լ.Ա. արք են և միտս իմ զայս բաւեց, տվեալ թագաւորին թէ Թշնամի քո են, զայսոսիկ սպա՛ն և ապա կարիցես տանել յառաջ զհրամանս քո. և այժմ զներսինն խնդրէին։ Եւ թագաւորն ասէր ծառայիցն և զօրացն թէ Զերեքն լնձ բաշխեցէք. և ոչ գիտէր, ասեն, զխնդրած երեքն թէ ո՛վ է, բայց զինչ ասէին ի ներսն՝ զայն ասէր թագաւորն։ Եւ սոքա ի մի բերան աղաղակելով ձայնէին թէ Մի՛ զահմաթիր, թագաւո՛ր, մի մարդ չենք բաշխեր բնաւին։ Եւ թագաւորն զահի հարեալ՝ զմարհաման ի պարանոցն արկեալ լալով ա-